**«Ծիածան» ԱԿԿ** *առաջնորդների կրթական կենտրոն ՀԿ*

*«Նախադպրոցական կրթության այլընտրանքային, ծախսարդյունավետ մոդելների ներդնում, մշտադիտարկում Կապան համայնքում»*

Սույն ծրագրային պատմությունը **մշակվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում**

« **«Ծիածան» ԱԿԿ» ՀԿ կողմից իրականացվող** «Նախադպրոցական կրթության այլընտրանքային, ծախսարդյունավետ մոդելների ներդնում, մշտադիտարկում Կապան համայնքում» **ծրագրի շրջանակներում:**

**Բովանդակության համար պատասխանատվություն է կրում « « Ծիածան» ԱԿԿ» ՀԿ-ն, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:**

*Կապան 2019թ.*

# Ծրագրի նպատակը

- *Նախադպրոցական ծառայությունների ներդրման միջոցով նախադպրոցական կրթության մատչելիության այլընտրանքային մոդելների կիրառում և մշտադիտարկում Կապան համայնքում:*

- *Նախադպրոցական կրթության այլընտրանքային մոդելները հասանելի և մատչելի դարձնել Կապան համայնքում:*

- *Ծրագրի շրջանակներում ընդգրկված 20 դաստիարակների և 25 ծնողների վերապատրաստման դասընթացներ:*

- *Հանրային քննարկման կազմակերպում ՀՀ կառավարության ընդունած 2019–2021 թթ.–ի պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի բաղադրիչ հանդիսացող նախադպրոցական կրթության մատչելիության և հասանելիության այլընտրանքային մոդելների կիրառման վերաբերյալ, ներգրավելով կրթության ոլորտի փորձագետներ:*

- *Ծրագրի մոդելը ներկայացնել Կապան համայնքի ռազմավարական ծրագրում ընդգրկելու նպատակով:*



Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ «Իրավաբանների հայկական ասոց իացիա»
հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող
«Կառուցողական երկխոսությանհանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամա շնորհի
շրջանակներում հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության հուշագրի ստորագրում:

***2019թ հունվարի 10-ին Երևան քաղաքում տեղի ունեցած «ԿԵՀ ծրագրով սպասվող ֆինանսանական հաշվետվությունների, լուսաբանումների ու աուդիտի մասին բոլոր տեղեկությունները՝ մեկ դասընթացում » հանդիպում-սեմինարին մասնակցեց նաև ծրագրի ղեկավար Սուսաննա Մարտիրոսյանը***






# Ծրագրի ղեկավար



Սուսաննա Մարտիրոսյան «Ծիածան » Առաջնորդների Կրթական Կենտրոն հասարակական կազմակերպության նախագահ, մշակույթի և հասարակական գործիչ:

# Ծրագրի փորձագետ



Լիլիթ Առաքելյան
Հանրակրթության
ոլորտի
մասնագետ,
վերապատրաստո
ղ
ուսուցիչ,
պատմաբան,
հասարակագետ,
դպրոցի տնօրեն:

2019 թ. հունվարի  11-ին հանդիպում տեղի ունեցավ  Կապանի տարածքային հաշվապահական հաշվառման գրասենյակի ղեկավար Կարեն Հովհաննիսյանի հետ և  կնքվեց ծառայությունների մատուցման պայմանագիր:

Ծրագրի ֆինանսական գործունեության իրականացման և պատշաճ կերպով ֆինանսական հաշվետվությունները վարելու համար պատասխանատուն Կապանի տարածքային հաշվապահական հաշվառման գրասենյակն է:



2019 թ. հունվարի 14-ին գրասենյակ հրավիրվել են տարբեր ծրագրերում աշխատանքային փորձ, հմտություններ, մասնագիտական խորը գիտելիքներ ունեցող անձիք ՝ աշխատանքային խումբ ձևավորելու նպատակով: Նրանց ներկայացվեց ծրագրի բովանդակությունը՝ նպատակը, խնդիրները, իրականացման ժամանակահատվածը, համայնքին օժանդակելու պատրաստակամությունը:





2019 թ հունվարի 15-ին ծրագրի փորձագետ
Լիլիթ Առաքելյանի հետ
կնքվեց ծառայությունների մատուցման պայմանագիր
80 աշխատանքային օր ժամկետով:

2019 թ. հունվարի 17-ին ծրագրի սոցիոլոգ Անուշ Մեժլումյանի հետ կնքվեց ծառայությունների մատուցման պայմանագիր 45 աշխատանքային օր ժամկետով:





2019 թ հունվարին աշխատանքային պայմանագիր կնքվեց ծրագրի հարցազրուցավար, դասընթացավար, ներառական կրթության մասնագետ, հատուկ դպրոցի երկարամյա տնօրեն՝ Ռիտա Դավթյանի հետ:









2019 թ. հունվարի   25-ին  «Նախադպրոցական կրթության այլընտրանքային,  ծախսարդյունավետ մոդելների ներդնում, մշտադիտարկում Կապան համայնքում » ծրագրի աշխատանքային խումբը՝ Ս. Մարտիրոսյան, Լ. Առաքելյան, Ա. Մեժլումյան, Ռ. Դավթյան,Վ. Բաղդասարյան Կապանի համայնքապետարանի նիստերի դահլիճում գործընկերային հանդիպում ունեցան համայնքապետարանի կրթության, մշակույթի, սպորտի բաժնի պետ `Հենրի Բաղդասարյանի, բաժնի գլխավոր մասնագետ՝ Աիդա Արզումանյանի, տնտեսական զարգացման և արտաքին կապերի բաժնի պետ՝ Հասմիկ Ղոնյանի հետ:

## Ծրագրի մեկնարկի լուսաբանում մարզային լրատվամիջոցների կողմից



***2019 թ. հունվարի 30-ին «Ծիածան » ԱԿԿ ՀԿ-ի գրասենյակում տեղի ունեցավ հանդիպում «Սյունյաց Երկիր» մարզային թերթի լրագրող Վահրամ Օրբելյանի հետ: Հարցազրույցի ընթացքում ներկայացվեց ծրագրի էությունն ու բովանդակությունը***



Խուստուփ TV -ի անդրադարձը

https://web.facebook.com/KhustupTvXustupTiviHerustankerutyun/videos/257370888490739/

## Քայլ 1

- Ուսումնասիրություններ իրականացնելու համար 2019թ փետրվարի 6-22-ը այցելություններ կազմակերպվեցին Կապան խաշորացված համայնքում գործող 12, Կապանի տարածաշրջանի 4 վարչական բնակավայրերում՝ Ծավ, Դավիթբեկ, Արծվանիկ, Սյունիք գյուղական համայնքներում գործող ՆՈՒՀ-եր: Ինչպես նաև 8 վարչական բնակավայրեր, որտեղ բացակայում են ՆՈՒՀ-երը:

## Քայլ 2

- Հանդիպումների ընթացում ՀՀ կառավարության ընդունած 2019-2021թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրում կրթության մատչելիության և հասանելիության գործընթացի մասին իրազեկվեցին ՆՈՒՀ-երի տնօրենները, դաստիարակները, մեթոդիստները, ինչպես նաև ՆՈՒՀ հաճախող և հերթագրված երեխաների որոշ ծնողները: